ՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՂՄԻՑ ՈՒՍԱՆՈՂԱԿԱՆ ՆՊԱՍՏՆԵՐԻ ՁԵՎՈՎ ՈՒՍՄԱՆ ՎԱՐՁԻ ԼՐԻՎ ՓՈԽՀԱՏՈՒՑՄԱՆ (ԱՆՎՃԱՐ) ՄԱՍԻՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N094102-15Բ

ք. Երևան

<<29>> 01. 2015 թ.

Հայաստանի Հանրապետության կրթության և գիտության նախարարությունը, ի դեմս << կրթության և գիտության նախարարության աշխատակազմի ղեկավար Մ. Ղազարյանի, որը գործում է նախարարության կանոնադրության հիման վրա, այսուհետ Պատվիրատու մի կողմից, և <<Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարան>> ՊՈԱԿ-ը, ի դեմս համալսարանի ռեկտոր Գ. Խաչատրյանի, որը գործում է համալսարանի կանոնադրության հիման վրա, այսուհետ Կատարող մյուս կողմից, ղեկավարվելով <<<Հայաստանի Հանրապետության 2015 թվականի պետական բյուջեի մասին>> << օրենքով, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին.

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1 Պատվիրատուն հանձնարարում է, իսկ Կատարողը ստանձնում է իրականացնել << 2015 թվականի պետական բյուջեի 09.4.1.02. <<Բարձրագույն մասնագիտական կրթություն>> ծրագրի շրջանակներում Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարանի միջին տարեկան 230 ուսանողներիի համար հաշվարկված, ինչպես նաև << օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողներին, ուսանողական նպաստների ձևով ուսման վարձի լրիվ փոխհատուցման պարտավորությունները:

2.ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ

2.1. Սույն պայմանագրով Կատարողին պարտավորությունները կատարելու համար նախատեսված գինը կազմում է մինչև 127227300 (մեկ հարյուր քսանյոթ միլիոն երկու հարյուր քսանյոթ հազար երեք հարյուր) << դրամ, որը ներառում է << օրենքներով սահմանված արտոնություններ ունեցող ուսանողների ուսման վարձի փոխհատուցումը՝ 3560000 (երեք միլիոն հինգ հարյուր վաթսուն հազար) << դրամ և մասնակի փոխհատուցումը՝ 6493250 (վեց միլիոն չորս հարյուր իննսուներեք հազար երկու հարյուր հիսուն) << դրամ:

2.2. Պատվիրատուն պարտավորությունները կատարելու դիմաց տրամադրված միջոցները վճարում է Կատարողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով:

2.3. Պատվիրատուին իրավունք է վերապահվում պայմանագրով ամրագրված գումարի չափը փոփոխել՝ ավելացնել կամ նվազեցնել:

3. ԱՋԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ԵՎ ԾԱԽՍԵԼՈՒ ԿԱՐԳԸ

3.1 Կատարողը պետք է ապահովի սույն պայմանագրի 1.1 կետում նախատեսված նպատակների իրականացումը:

3.2 Սույն պայմանագրի 2.1 կետում նշված միջոցները պետք է ծախսվեն բացառապես սույն պայմանագրի 1.1 կետում նշված նպատակներին համապատասխան:

3.3 Կատարողը պետք է հաշվապահական փաստաթղթերը վարի օրենսդրությամբ սահմանված պահանջներին համապատասխան:

4. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

4.1 Սույն պայմանագրով Կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվության են ենթարկվում << օրենսդրությամբ սահմանված կարգով:

5. ԱՅԼ ԴՐՈՒՅԹՆԵՐ

5.1 Սույն պայմանագիրն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և գործում է մինչև 2015 թվականի դեկտեմբերի 30-ը:

5.2 Սույն պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն կողմերի համաձայնությամբ, որը կնքվում է գրավոր:

5.3 Սույն պայմանագիրը կնքված է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ: Յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ:

6.ԿՈՂՄԵՐԻ ՀԱՍՑԵՆԵՐԸ, ԲԱՆԿԱՅԻՆ ՎԱՎԵՐԱՊԱՅՄԱՆՆԵՐԸ ԵՎ ՍՏՈՐԱԳՐՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

Պ ա տ վ ի ր ա տ ու	Կ ա տ ա ր ո ղ
ՀՀ կրթության և գիտության նախարարություն	<<Վանաձորի Հ. Թումանյանի անվ. պետական համալսարան>> ՊՈԱԿ
ք. Երևան, Կառավարական 3 շենք	ք. Վանաձոր, Տիգրան Մեծի 36
ՀՀ ՖՆ ԿԳ գործառնական վարչություն	<<ՎՏԲ - Հայաստան>> Վանաձորի մ/ճ
հ/հ 900011034130	հ/հ 160361078142
Նախարարության աշխատակազմի ղեկավար՝ ---------- Մ. Ղազարյան	Ռեկտոր՝ ---------- Գ. Խաչատրյան
(ստորագրություն)	(ստորագրություն)
Կ.Տ	Կ.Տ